

ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մելինե Վահեի Անույանը ծնվել է 1977 թ. մարտի 22-ին, Երևանում: 1994 թ. ընդունվել է ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության բաժինը: 1999 թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի (ներկայում՝ հիմնադրամ) ասպիրանտուրա:

1999-2001 թթ. աշխատել է հիշյալ ինստիտուտում՝ որպես կրտսեր գիտաշխատող: 2002 թ. Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից 3 ամսով գործուղվել է Ստամբուլ, որտեղ Պատմության հիմնադրամ (Tarih Vakfi) կազմակերպությունում անցել է օսմաներենի (արաբատառ թուրքերենի) արագացված դասընթաց:

2004 թ. աշխատանքի է ընդունվել Հայաստանի հանրային ուղիորդի արտասահմանի համար հեռարձակվող ծրագրերի բաժնում՝ որպես թուրքերեն հաղորդումների խմբագիր, որտեղ աշխատում է մինչ օրս: 2008 թ. մարտ-դեկտեմբեր ամիսներին աշխատակցել է Ռուսաստանի Դաշնության «Голос России» ուղիորդայանին՝ որպես թուրքերեն հաղորդումների թարգմանիչ և հաղորդավար:

2008 թ. սեպտեմբերին, որպես ավագ դասախոս, աշխատանքի է ընդունվել Երևանի Հրաչյա Աճառյանի անվան համալսարանում, որտեղ 3 տարի դասախոսել է թուրք գրականություն:

2009 թ. աշխատանքի է անցել Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն գիտահետազոտական հիմնադրամում՝ որպես ավագ գիտաշխատող և թուրքերեն բաժնի պատասխանատու: մինչ այժմ շարունակում է աշխատել այստեղ:

2012 թ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հայոց ցեղասպանության խնդիրը երիտթուրքերի դատավարություններում (1919-1921 թթ.)» թեմայով՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի աստիճան:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թարգմանությունները

2009 թ. Մ. Անույանի կողմից թուրքերենից հայերեն թարգմանությամբ Երևանում տպագրվել է թուրք ժամանակակից դրամատուրգ Հասան Էրքեքի «Շեմ» պիեսը (128 էջ):

2014 թ. Մ. Անույանը հայերենից թուրքերեն է թարգմանել պատմական գիտությունների դոկտոր Արտակ Մովսիսյանի հեղինակած «Հռոմից ավելի հին մայրաքաղաքը» և «Պատմության կեղծարարները. Ադրբեջան» ֆիլմերը:

2016 թ. Մ. Անումյանի թարգմանությամբ Երևանում հայերենով հրատարակվել է թուրք հայտնի ցեղասպանագետ, պրոֆեսոր Թաներ Աքչամի «Հայերի բռնի իսլամացումը. լռություն, ժխտում և ուժացում» աշխատությունը (293 էջ):

2018 թ. Մ. Անումյանի կողմից թուրքերենից հայերեն թարգմանությամբ Գերմանիայում հրատարակվել է թուրք հայտնի գրող Քեմալ Յալչընի «Վերջին ցանկությունս. պոլսահայ Բրենդա Ժամկոչյան-Բաշարի հիշատակին» գիրքը:

Մենագրությունները

2011 թ. Երևանում Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի կողմից հրատարակվել է Մ. Անումյանի առաջին մենագրությունը՝ «Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի» վերտառությամբ (289 էջ):

2013 թ. Երևանում Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից տպագրվել է Մ. Անումյանի երկրորդ մենագրությունը՝ «Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները 1919-1921թթ. և 1926 թ.» վերնագրով (168 էջ):

2017 թ. Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսության՝ Անթիլիասի տպարանը, «Խաչիկ Պապիկյան» հիմնադրամի հովանավորությամբ, հրատարակել է Մ. Անումյանի «Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 և 1926 թթ.)» մենագրության անգլերեն թարգմանությունը՝ “ACKNOWLEDGMENT AND CONDEMNATION: THE TRIALS OF YOUNG TURKS IN 1919-1921 & 1926” վերտառությամբ (թարգմանիչ՝ Արա Գաբրիելյան, անգլերեն հրատարակության խմբագիր՝ Արևիկ Գաբրիելյան, 237 էջ):

2018 թ. թուրքական «Փենջերե» հրատարակչությունը Ստամբուլում լույս է ընծայել Մ. Անումյանի «Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 և 1926 թթ.)» գրքի թուրքերեն հրատարակությունը (“Tanima ve Telin; İttihat Terakki Yargılamaları (1919-1921 ve 1926) (թարգմանիչ՝ Տիրան Լոքմագյոզյան):

Հոդվածները

- «Յոզղատի և Տրապիզոնի տեղահանության և կոտորածների դատավարություններն ըստ «Ալեմդար» օպրաթերթի», Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր - 9, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2004 թ.;
- «Հայերի տեղահանության և կոտորածների դատական գործերը. երեք մահապատիժ», Մերձավոր Արևելք (պատմություն, քաղաքականություն, մշակույթ), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2005 թ.;
- «Մեծ եղեռնը հավաստող վկայություններ օսմանյան «Ալեմդար» օրաթերթում (1919 թ.) », Բանբեր Հայաստանի արխիվների N 1 (107), Երևան, 2006 թ.;

- «Հայոց բնաջնջումը Տրապիզոնի նահանգում տեղահանության և կոտորածների դատական վավերագրերի համաձայն», Մերձավոր Արևելք (պատմություն, քաղաքականություն, մշակույթ), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2007 թ.;
- «Թուրքիայում Հայոց ցեղասպանության պատասխանատուների հերոսացման հարցի շուրջ», Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հատոր VII, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2011 թ.;
- «Իթթիհատական ավանդույթի պահպանումը Թուրքիայի Հանրապետությունում. երիտթուրքերի 1919-1921 թթ. և 1926 թ. դատավարությունների համեմատական վերլուծություն», ՎԷՄ համահայկական հանդես, Երևան, 2012 թ. հունվար-մարտ թիվ 1 (37);
- «Յոզղատի հայության տեղահանության և կոտորածների դատավարությունը՝ ըստ օսմանյան «Մեմլեքեթ» օրաթերթի, ԱԿՈՒՆՔ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական հոդվածների ժողովածու, թիվ 2 (8), Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2013 թ.;
- “The Irrefutable Testimonies of the Armenian Genocide in the Trials of the Deportations and Massacres of the Armenian from Yozghat and Trebizond, Regional Affairs 2/2014, «Տարածաշրջանային խնդիրներ» գիտական ամսագիր, Երևան, 2014 թ.;
- «Ծպտյալ և իսլամացված հայերի հարցի արծարծումը ժամանակակից թուրքական մամուլում», Ցեղասպանագիտական հանդես 2 (1), ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2014 թ.;
- «Պոլիտիցիդը Հայոց ցեղասպանության համատեքստում», Ցեղասպանագիտական հանդես N 1-2, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, Երևան, 2015 թ.;
- «Հայոց ցեղասպանության եւ Հայկական հարցի թեմաներով 2008-2018-ին հրատարակուած թուրքիացի մտաւորականների ուսումնասիրութիւնները, Հայկազեան Հայագիտական Հանդես, 39-ր հատոր, Պէյրութ, 2019 թ.:

Գրախոսությունները

- Թեոֆանիս Մակիդիս, «Հույների ցեղասպանությունը. Թրակիա, Փոքր Ասիա, Պոնտոս», հեղինակագրոված թարգմանությունը՝ Թեհմինե Մարտոյանի, Երևան, 2014 թ.;
- Սարգիս Մկրտչեան, «Պանթիւրքական հոսանքները ժամանակակից Իրանում», Երևան, 2018 թ.:

Խմբագրությունները

- Հայկազուն Ալվրցյան, «Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում», Երևան, 2014 թ., Մ. Անույանի խմբագրությամբ լույս է տեսել նաև նույն գրքի թուրքերեն տարբերակը:
- Հայկազուն Ալվրցյան, «Համշենը և համշենահայությունը. արդի հիմնախնդիրները», Երևան, 2016 թ.: